

Կ-402-11.10.2022-ՏՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 113-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ.

«8) Օրենսգրքով սահմանված կարգով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողներից ձեռք բերված ապրանքների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով կատարվող ծախսերը, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված կարգով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողներից անհատույց օգտագործման վերցված շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի գծով սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկվող ծախսերը:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «ընտանեկան ձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգերի» բառերը փոխարինել «միկրոձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգի» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 267-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասի առաջին պարբերությունում «չի գերազանցել է» բառերը փոխարինել «չի գերազանցել» բառերով,

2. 5-րդ մասում՝

1) 3-րդ կետից հանել «անձնական օգտագործման» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետ.

«11) վարձակալական վճարի, տոկոսի (բացառությամբ սպասարկող բանկում առկա ընթացիկ հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսի) և (կամ) ռոյալթիի ստացում նախատեսող՝ գործող պայմանագրի՝ վարձակալական վճար, տոկոս և (կամ) ռոյալթի ստացող կողմ հանդիսացող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կամ 9-րդ» բառերը փոխարինել «, 9-րդ կամ 11-րդ» բառերով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 269-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից Օրենսգրքով սահմանված կարգով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից.»»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի շրջանակներում եկամուտների հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:»:

**Հոդված 6.** Օրենսգրքի 270-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «՝ միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների համար» բառերը:

**Հոդված 7.** Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 271-րդ հոդվածը:

### **Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ հոդվածի և 7-րդ հոդվածի:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից և կիրառվում է 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկման ենթակա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով, ինչպես նաև 2023 թվականի հուլիսի 1-ից հետո վճարված՝ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ չհամարվող եկամուտների մասով:

3. Սույն օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:

4. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված ծախսերի՝ հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցման սահմանափակումը կիրառվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո՝

1) ձեռք բերված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերի մասով,

2) հաշվեգրված՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի մասով,

3) ձեռք բերված՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեության առարկա հանդիսացող ապրանքների ձեռք բերման արժեքի և այդ ապրանքների սկզբնական արժեքի տարր համարվող՝ 2023 թվականի հունվարի 1-ից հետո հաշվեգրված այլ ծախսերի մասով,

4) ձեռք բերված՝ սույն մասի 2-րդ և 3-րդ կետերում չնշված ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) օտարման դեպքում՝ դրանց հաշվեկշռային արժեքի մասով,

5) հաշվեգրված վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի մասով,

6) հաշվեգրված ֆինանսական ծախսերի մասով:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 9.** ~~Հայաստանի Հանրապետության~~ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 113-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետ.

«8) Օրենսգրքով սահմանված կարգով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողներից ձեռք բերված ապրանքների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով կատարվող ծախսերը, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված կարգով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողներից անհատույց օգտագործման վերցված շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի գծով սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկվող ծախսերը:»:

**Հոդված 10.** Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «ընտանեկան ձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգերի» բառերը փոխարինել «միկրոձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգի» բառերով:

**Հոդված 11.** Օրենսգրքի 267-րդ հոդվածի՝

3. 3-րդ մասի առաջին պարբերությունում «չի գերազանցել է» բառերը փոխարինել «չի գերազանցել» բառերով,

4. 5-րդ մասում՝

3) 3-րդ կետից հանել «անձնական օգտագործման» բառերը.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետ.

«11) վարձակալական վճարի, տոկոսի (բացառությամբ սպասարկող բանկում առկա ընթացիկ հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսի) և (կամ) ռոյալթիի ստացում

նախատեսող՝ գործող պայմանագրի՝ վարձակալական վճար, տոկոս և (կամ) ռոյալթի ստացող կողմ հանդիսացող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:»:

**Հոդված 12.** Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կամ 9-րդ» բառերը փոխարինել «, 9-րդ կամ 11-րդ» բառերով:

**Հոդված 13.** Օրենսգրքի 269-րդ հոդվածում՝

3) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից Օրենսգրքով սահմանված կարգով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից.»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի շրջանակներում եկամուտների հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:»:

**Հոդված 14.** Օրենսգրքի 270-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «՝ միկրոձեռնարկատիրությունում ներգրավված վարձու աշխատողների համար» բառերը:

**Հոդված 15.** Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 271-րդ հոդվածը:

**Հոդված 16. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ հոդվածի և 7-րդ հոդվածի:

6. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից և կիրառվում է 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկման ենթակա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով, ինչպես նաև 2023 թվականի հուլիսի 1-ից հետո վճարված՝ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ չհամարվող եկամուտների մասով:

5-7. Սույն օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:՝

6-8. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված ծախսերի՝ հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցման սահմանափակումը կիրառվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո՝

7) ձեռք բերված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերի մասով,

8) հաշվեգրված՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի մասով,

9) ձեռք բերված՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեության առարկա հանդիսացող ապրանքների ձեռք բերման արժեքի և այդ ապրանքների սկզբնական արժեքի տարր համարվող՝ 2023 թվականի հունվարի 1-ից հետո հաշվեգրված այլ ծախսերի մասով,

10) ձեռք բերված՝ սույն ~~հոդվածի 1-ին 2-րդ~~ մասի ~~1-ին, 2-րդ~~ և 3-րդ կետերում չնշված ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) օտարման դեպքում՝ դրանց հաշվեկշռային արժեքի մասով,

11) հաշվեգրված վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի մասով,

12) հաշվեգրված ֆինանսական ծախսերի մասով:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ  
 «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-402-11.10.2022-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

**Հոդված 17.**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
<b>«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ</b>					
1.	<b>Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյան</b>	<b>8-րդ հոդված</b>	Առաջարկվում է սահմանել, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերը եկամտային հարկով ընդհանուր սահմանված կարգով հարկելու՝ նախագծով առաջարկվող կարգավորումներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:	<b>Ընդունվել է:</b> Նախագծի 8-րդ հոդվածում են լրացվել են նոր 2-րդ և 3-րդ մասեր: Միաժամանակ, նշյալ առաջարկությամբ պայմանավորված փոփոխություններ են կատարվել նաև «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» <b>օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդվածում:</b>	<b>Ընդունվել է:</b>
2.	<b>ՀՀ</b>	<b>1-ին հոդված</b>	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի	<b>Ընդունվել է:</b> Նախագծում կատարվել	<b>Ընդունվել է:</b>

	<b>կառավարություն</b>		Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի» բառերը փոխարինել «2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության» բառերով:	է համապատասխան փոփոխություն:	
3.	<b>ՀՀ կառավարություն</b>	<b>8-րդ հոդված</b>	Հաշվի առնելով նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում տեղ գտած վրիպակը՝ առաջարկվում է նշյալ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ձեռք բերված՝ սույն մասի 2-րդ և 3-րդ կետերում չնշված ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) օտարման դեպքում՝ դրանց հաշվեկշռային արժեքի մասով,»	<b>Ընդունվել է:</b> Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	<b>Ընդունվել է:</b>
<b>«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿ</b>					
	<b>Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Բաբկեն Թունյան</b>	<b>2-րդ հոդված</b>	Առաջարկվում է սահմանել, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից վարձու աշխատողներին վճարվող աշխատավարձերը եկամտային հարկով ընդհանուր սահմանված կարգով հարկելու՝ նախագծով առաջարկվող կարգավորումներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից:	<b>Ընդունվել է:</b> Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	<b>Ընդունվել է:</b>